և ուրիշ տոհմեր ու իշխանություններ *, իսկ Իվանեյի տանը, Դոփյանք, Որբելյանք և Խաղբակյանք, վոր Պռոշյանք անունով հայտնի դարձան ապագայում։ Զինվորական Յոհան՝ Լեռամ՝ նոքա՝ բոլորը Զաքարյանները «փոխան հայրենեաց» Վայոց ձորում, Գեղարքունիքում վորոշ կալվածներ ստանալուց հետո, ստանում է և Սյունիքը, «զի նա եղև առաջնորդ առման Սիւնեաց»։ Իվանեյին աջակից եր Լիպարիտ Որբելյան,

Պատկեր 3.

Վասակ Խաղբակյանի արձ. Արատեսում. Հավել. Ա. 3.

յանների զորավարներն եյին, վոր ոգնել եյին յերկու յեղբայրներին նվաճման գործում և այդպիսի ծառայության համար մի մի գավառի կողմնակալ իշխան նշանակվել ժառանգական իրավունքով։ Լիպարիտ Որբել-

Խորազմների դեմ մղած պատերազմի մեջ *։ Պռոշյանց իշխանության հիմնադիր Վասակ Խաղբակյան «հրամանաւ և ուժով Իվանէի» նվաճումներ է անում Վայոց ձորում, և յուր զինակից յեղբայրների և վորդիների հետ աջակցում նորան պատերազմների մեջ, Զաքարյաններին համարելով յուր պատրոնները **։ Վաչուտյանց

* Սանահնի և Խծկոնքի արձանագրությունների մեջ հիշվում են մի շարք իշխանական անուններ, վորոնց տոհմի անունը դեռ ևս չե հաջողվել մեզ գտնել. այսպես ՈԿԴ=1314 թվին «Դաւիթ որդի Գրիգորոյ զաւրավար ամիր սպասալարին Զաքարիայ», և յուր վորդիքը «Գրիգոր եւ Գայլս Շերպաբիք» Խծկոնից Ս. Սարգսին նվիրում են Վահանաձոր գյուղի կեսը (տ. մեր Գրչության արվեստը Գ. § 23. տախտ. ԺԱ.) ասել է, թե նրանց կալվածներն ընկնում եյին Անիի, Տիկորի կամ Բագարանի շրջաններում։ Բայց նրանք գերեզմանատուն ունեյին Սանահնում, ուր թաղված է Դավիթ զորավարի հայրը Գրիգոր. «Դաւիթ իշխանաց իշխան» յուր հոր գերեզմանի վերա կանգնել է մի փառավոր և հնագիտական-գեղարվեստական տեսակետից շատ հետաքրքրական խաչարձան։

—Մի ուրիշ «Դաւիթ իշխան որդի Շոթոռկան» նույնպես հիշատակվում է Հաղբատի, Սանահնի և Խծկոնից վանքերի արձանագրությունների մեջ, և վորը կալվածներ ուներ Հաղբատի և Սանահնի մեջտեղ, ապա Խծկոնքի և Մրենի շրջաններում։ Սրա հետ Զաքարիա սպասալարը հողերի փոխանակություն է անում և Հաղբատին նվիրում 1210 թվին. իսկ 1211 թվին Խծկոնից մի արձանագրության մեջ Զաքարիայի կատարած նվիրաբերությունների փոխարեն հայր Հովհաննեսն ու միաբանները «առաջնորդությամբ Դաւթի · որդոյ Շոթրոկայ» հաստատում են ավագ բեմում շարունակ պատարագել Զաքարիայի և նորա վորդու Շահնշահի արևշատության համար։ Դավիթ իշխան վորդի Շոթոռկան ինքն էլ նվիրաբերություն ունի Սանահնի վանքին ՈՀԱ=1222 թվի արձանագրության համեմատ։ Դավթի ստորադրեալներից մեկը՝ Բռնավոր յուր ամուսին Տղատիկնոջ հետ՝

դրել են ավել 1236 թվին մի շքեղ, պատկերազարդ, յերկաթագիր ավետարան, վոր պահվում է այժմ Ն. Զուղայի Ամենափրկիչ վանքում։ Մանրանկարների թվում և ստացող ամուսիններինը, վորի ջրանկարությունն ունինք Վարդգես Սուրենյանի ձեռքով։ Բռնավորը յուր հիշատակարանի մեջ խնդրում է հիշել նաև «զանուցանուցն իմ զբարեպաշտ իշխանաց իշխան զպատրոն Դաւիթ Շոթոռկանց եւ զորդիսն իւր զքաջ և զանուանի պատրոնաց պատրոն Գրիգոր եւ զորդիսն իւր զՍմբատ եւ զԱրջուկն եւ զԱրզուխաթուն»։ Ավետարանը նրանք նվիրում են Խծկոնից վանքին Տեր Արաս յեպիսկոպոսի ժամանակ։ Նույն ամուսինները ՈՁԹ=1240 ունին և հատուկ արձանագրություն նույն վանքում, վորով հայտնում են «ողորմութեամբ աստուածասէր պարոնին իմոյ Գրիգորոյ» իրենց նվիրաբերությունը մի զանձագին այգու հետ, «որ ի Մրեն», «եւ աւետարան մեծագին ի ձեռն աստուածապատիւ եպիսկոպոսիս տէր Արասա եւ այլ սուրբ եղբարցս»։ (Ավետարանի հիշատակարանի քաղվածքը, նշանակված հանգուցյալ Վարդգես Սուրենյանցի ձեռքով՝ պատկերի հետևում, ձեռքի տակ չունենալով այժմ, ոգտվեցանք Տ. Ավետիսյան Սմբատի Նոր Զուղայի ձեռագիրների ցուցակից, արտագրությամբ հ. Ներսես Ակինյանի)։

* Որբել. 360, 397, 399։

** Որբ. 350. 397.—Արատեսի արձանագր. Պատկ. 3. Հավելված Ա. 3։ Կեչառույքի արձ. պատկ. 4. Հավել. Ա. 4.—Համ. Ջալ. Բ.. 157. Ալիշան. Սիսական 143։ Գանձ. 194։